



**MILLENNIUM
CHALLENGE
CORPORATION**
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՍՅԱԿԻ
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

Տեղեկությունների համար դիմել

Նանե Աճեմյանին, հեռ.՝ 37410. 547-988

15 օգոստոսի, 2007թ.

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստանը սահմանում է Ջրից դեպի շուկա ենթածրագրի շրջանակներում նախատեսված վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակցույցը ըստ համայնքների

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) որոշել է այն ժամանակացույցը, ըստ որի ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի շուկա ենթածրագրի վերապատրաստման բաղադրիչում ընդգրկված գյուղերը կմասնակցեն նախատեսված դասընթացներին:

Ջրից դեպի շուկա ենթածրագիրը, որն իրականացվում է ACDI/VOCA, Arcadis Euroconsult և վերջիններիս տեղական գործընկեր VISTAA Plus-ի կողմից, վերապատրաստման դասընթացներ է տրամադրում գյուղացիական տնտեսություններին՝ առավել շահութաբեր, շուկային կողմնորոշված գյուղատնտեսությանն անցմանը օժանդակելու նպատակով: Այս ենթածրագրի ներքո հինգ տարվա ընթացքում վերապատրաստման դասընթացներ կանցնի շուրջ 60 000 ֆերմեր:

ՀՄՀ-Հայաստանը որոշել է այն համայնքների շրջանակը, որոնք ծրագրի փորձնական փուլի ավարտից հետո (սեպտեմբերի 30) առաջիկա չորս տարիների ընթացքում կընդգրկվեն ծրագրում: Համայնքերի ընտրության գործընթացի արդարացիությունը և բափանցիկությունը ապահովելու տեսանկյունից լավագույն մեթոդ է համարվել համայնքների ընտրության պատահական մեթոդը: Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից վարձված Մաթեմատիկա Փոլիսի Բիսրոչ ամերիկյան ընկերությունը ՀՄՀ-Հայաստանին տեխնիկական աջակցություն է ցուցաբերել պատահական ընտրանքի համակարգչային ծրագրի մշակման և բուն ընտրության անցկացման հարցում:

Այն գյուղերը, որտեղ վերապատրաստման դասընթացներ են անցկացվելու ծրագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ տարիներին խմբավորվել են ըստ մարզերի և ըստ այն Ջրօգտագործողների ընկերությունների, որոնց անդամակցում են: 2008 թ. համար ընտրվել է 120 գյուղախումբ, 2009 և 2010 թթ. համար՝ 77, իսկ 2011 թ. համար՝ 80-ը: 69 գյուղախումբ ընդգրկվել էր փորձնական փուլում: Եվս 82 գյուղախումբ, որոնք որակվել են որպես ոչ բավարար ջրամատակարարում ունեցող, և կկարողանան մասնակցել ծրագրին, երբ ռոզգման ենթածրագրի ջանքերով կբարելավվի նրանց ջրամատակարարումը: (Գյուղախմբերը սովորաբար բաղկացած են մեկ, երկու կամ երեք գյուղերից՝ աշխարհագրական կամ գյուղատնտեսական ընդհանրությունների հիման վրա:)

Այս գյուղերի մի մասի ֆերմերները հարցախույզի կենթարկվեն՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ազդեցությունը գնահատելու նպատակով:

2006թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած Համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տևական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունքներ կապահովի շուրջ 750000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար: Նախատեսվում է, որ այն կկրճատի աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ու կավելացնի տարեկան եկամուտները:

Համաձայնագրով նախատեսվում է 67 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնել շուրջ 943 կմ գյուղական ճանապարհների վերականգման համար, որը կազմում է Հայաստանի առաջարկվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի ավելի քան մեկ երրորդը: Պատրաստ լինելուց հետո կենսական նշանակության ճանապարհային ցանցը կապահովի, որպեսզի յուրաքանչյուր գյուղական համայնք ելքի հնարավորություն ունենա դեպի շուկաներ, ծառայություններ եւ հիմնական ճանապարհային ցանց: Ըստ Համաձայնագրի ՀՀ կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ ռեսուրսներ ճանապարհային ցանցի պահպանման համար: Համաձայնագիրը նախատեսում է նաև 146 միլիոն ԱՄՆ դոլարի առանձին բաղադրիչ, որի նպատակն է բարձրացնել մոտ 250000 ֆերմերային տնտեսությունների (որոնցից 34%-ը գլխավորում են կանայք) արտադրողականությունը՝ բարելավելով ջրամատակարարումը, բերքատվությունը, խթանելով բարձրարժեք բերքի մշակումը եւ մեծացնելով գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունը:

###

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) ԱՄՆ պետական կազմակերպություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: